ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1951 *Общественные науки*

Ե. Մովսիսյան

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի հաղթանակը մեծ իրադարձություն հանդիսացավ ոչ միայն Ռուսաստանի, այլև միջազգային ռևոլուցիոն շարժման պատմության մեջ։ Ռևոլուցիայի հաղթանակի շնորհիվ տապալվեց եվրոպական և ասիական ռեակցիայի հենարան ցարական միապետությունը։

Բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի հաղթանակը բոլշևիկյան պարտիան դիտում էր որպես առաջին քայլը՝ պրոլետարիատի կողմից իշխանության գրավման համար մղվող պայքարում։

Լենինը և Ստալինը ռևոլուցիայի հենց առաջին օրերին պարտիային ու բանվոր դասակարգին սովորեցնում էին՝ շարունակել պայքարը, մոբիլիզացնել բանվոր դասակարգի ու ողջ աշխատավորության ուժերը և բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից անցնել սոցիալիստական ռևոլուցիայի։

Բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիան մինչև հաղթական վախճանը հասցնելու, սոցիալիստական ռևոլուցիայի անցնելու գլխավոր պայմաններից մեկը Լենինը և Ստալինը համարում էին բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր դաշինքը, գյուղացիությունը բանվոր դասակարգի հետևից տանելը, ագրարային հարցի արմատական լուծումը։

Փետրվարյան ռևոլուցիայի հաղթանակից հետո ողջ պարտիայի հետ միասին ընդհատակից դուրս եկան նաև Հայաստանի բոլշևիկները և ծավալեցին բացահայտ քաղաքական աշխատանք, մոբիլիզացրին Հայաստանի աշխատավորությանը, վճռական պայքարի ելնելու՝ բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից սոցիալիստական ռևոլուցիայի անցնելու համար։

Իրականացնելով Լենինի-Ստալինի ցուցումները և պարտիայի ապրիլյան կոնֆերենցիայի պատմական որոշումները, Հայաստանի բոլշևիկները լուրջ ուշադրություն դարձրին աշխատավոր գյուղացիության վրա, գլխավորեցին ծավալվող ագրարային շարժումները և գյուղացիությանը համախմբեցին բանվոր դասակարգի շուրջը՝ իշխանությունը գրավելու համար մղվող պայքարում։

Անդրկովկասի, առավելապես Հայաստանի բնորոշ գծերից մեկը տնտեսական հետամնացությունն էր, տնտեսության գերակշռող ագրարային բնույթը՝ ճորտատիրական կացութաձևի դեռևս ամուր մնացորդներով։ Փետրվարյան ռևոլուցիայի նախօրյակին, այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիայում եղած վարելահողերի 25 տոկոսը գտնվում էր կալվածատերերի և վանքերի ձեռքին։ Համարյա նույնքան վարելահող գտնվում էր կուլակների ձեռքին։ Վարելահողերի միայն 50 տոկոսն էր գտնվում աշխատավոր գյուղացիության տրամադրության տակ, այն դեպքում, երբ նրանք կազմում էին գյուղական բոլոր տնտեսությունների մոտ 90 տոկոսը։ Հայաստանի 140 հազար հեկտար խոտհարքներից 100 հազար հեկտարը պատկանում էր կալվածատերերին, բ'։-

գերին, աղալարներին, կուլակներին և պետական գանձարանին։ Այդիների 60—70 տոկոսը գտնվում էր կալվածատերերի և ունևոր մյուս դասերի ձեռքին։[1] Իրենց տնտեսական գոյությունը քարշ տալու համար գյուղացիները հարկադրված էին ամենածանր պայմաններով վարձակալել ինչպես կալվածատիրական, այնպես էլ վանքապատկան ու պետական հողերը։ Հայկական գյուղերում,— գրում է Ստեփան Շահումյանը «որտեղ տիրակալում են զանազան բեգերն ու աղալարները,— դեռևս պահպանվում են հին կարգերը, գյուղացիները հողի դիմաց կալվածատերերի համար զանազան պարտականներ են կատարում»։[2]

Համաշխարհային պատերազմը էլ ավելի ծանրացրեց հայ աշխատավոր գյուղացիության դրությունը։ Մի կողմից գյուղի աշխատունակ մասի զորակոչի ենթարկվելը, մյուս կողմից լծկան անասունների, հատկապես քաշող ուժի ձիերի և այլն՝ վերցվելը պատերազմի կարիքների համար, կատաստրոֆիկ կերպով քայքայեցին գյուղատնտեսությունը։ Պատերազմի տարիներին կրճատվեցին ցանքերի տարածությունները, համարյա լրիվ քայքայվեց առանց այն էլ վատ ոռոգման սիստեմը, խիստ կրճատվեց բերքատվությունը, չտեսնված չափերի հասավ անասունների գլխաքանակի անկումը։

Պատերազմի տարիներին ավելացան հարկերը, ամեն տեսակի բռնագրավումները։ Պատերազմի յուրաքանչյուր տարին նոր արհավիրքներ էր բերում գյուղացիության համար։ Աղքատությունն ու սովը դարձան հայկական գյուղի ամենաբնորոշ հատկանիշները։

Այսպիսով, Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը փետրվարյան ռևոլուցիայի նախօրյակին ենթարկվում էր անասելի շահագործման և հազիվ քարշ էր տալիս իր աղքատ, իրավազուրկ վիճակը։

Հողի պակասը, գյուղացիության անասելի շահագործումը աղալարների, բեգերի, կալվածատերերի, կուլակների և եկեղեցու կողմից, իմպերիալիստական պատերազմի ծանր հետևանքները, սովն ու աղքատությունը,— այս բոլորը ավելի սրեցին դասակարգային պայքարը գյուղում, ուժեղացրին գյուղացիության դժգոհությունը տիրող կարգերի դեմ։ Այդ է պատճառը, որ Փետրվարյան ռևոլուցիայի հաղթանակը արագորեն ծավալվելով, շարժման մեջ դրեց Ռուսաստանի մյուս ժողովուրդների հետ միասին նաև հայ ժողովրդին, ոտքի հանեց նրան ռևոլուցիոն պայքարի։

Փետրվարյան ռևոլուցիայի հաղթանակի լուրը Հայաստան հասավ ռևոլուցիայի հենց առաջին օրերին։

Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը ռևոլուցիայի հաղթանակի լուրը դիմավորեց ակտիվ ելույթներով։ Նա պայքարի դուրս եկավ ցարական վարչական հին ապարատի դեմ, կազմակերպեց գյուղացիական Սովետներ, բռնագրավելով կալվածատերերից, կուլակներից, վանքերից և ունևոր մյուս դասակարգերից հողը։

Պայքարը հայկական գյուղում ընթանում էր ամենալարված պայմաններում։ Յուրաքանչյուր պարտիա և հասարակական շերտ աշխատում էր իր կողմը գրավել գյուղացիությանը, որովհետև վերջինս կազմելով բնակչության

[1] Հ. Թումանյան, Հայաստանի էկոնոմիկայի կարգացումը տնտեսության վերականգնման և երկրի ինդուստրացման համար մղվող պայքարի շրջանում։ Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխ., հատ. 27, էջ 99։

[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 531։

գերակշռող մասը և հանդիսանալով լուրջ ուժ, վճռական ազդեցություն պետք է ունենար ռևոլուցիայի ընթացքի վրա դրական կամ բացասական կերպով։

«Նայած այն հանգամանքին,— գրում է Լենինը 1917 թ. ապրիլին,— թե քաղաքային պրոլետարիատին կհաջողվի՞ արդյոք իր հետևից տանել գյուղական պրոլետարիատին և միացնել նրան գյուղի կիսապրոլետար մասսային, թե՞ այդ մասսան կգնա գյուղացիական բուրժուազիայի հետևից, որը ձգտում է Գուչկովի, Միլյուկովի կապիտալիստների, կալվածատերերի հետ դաշնակցելուն և ընդհանրապես դեպի կոնտրռևոլուցիան,— նայած այդ հանգամանքին, կորոշվի ռուսական ռևոլուցիայի բախտն ու ելքը...»։[1]

Գյուղացիությանը իր կողմը գրավելու համար մղվող պայքարը խիստ բնույթ ստացավ ինչպես ողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում։ Այդ պայքարը հիմնականում ընթանում էր երկու պարտիաների միջև՝ դաշնակցության — որն իր շուրջը համախմբելով կոնտրռևոլուցիոն բոլոր խմբերին աշխատում էր գյուղացիությանը իր հետևից տանել ու խանգարել ռևոլուցիայի հետագա խորացմանը Հայաստանում,— և բոլշևիկների միջև, որոնք ձգտում էին ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, ոտքի հանել ողջ աշխատավորությանը և ռևոլուցիան հասցնել մինչև հաղթական վախճանը։

Գյուղացիությանը իր հետևից տանելու համար դաշնակցությունը դիմում էր պայքարի բոլոր խարդախ միջոցներին՝ խաբեբայության, կեղծ «սոցիալիստական» լոզունգների, շանտաժի, գյուղացիական զանազան ազգային կազմակերպությունների, ընկերությունների ստեղծման։ Նա աշխատում էր ղեկավար տեղ գրավել կազմակերպվող գյուղացիական սովետներում, գյուղում ստեղծվող վարչական նոր ապարատում և այլն։ Դաշնակցությունը ամեն կերպ ձգտում էր հանդես գալ գյուղացիության «պաշտպանի» դերում։

Դաշնակցության բուրժուա-կալվածատիրական-կուլակային քաղաքականության մերկացմամբ հանդես եկավ բոլշևիկյան պարտիան։ Հայաստանի բոլշևիկները՝ գյուղացիության մեջ ծավալելով ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք, նրան ոտքի հանեցին կալվածատիրական հողերի բռնագրավման համար, գյուղացիներին բացատրելով, որ առանց իշխանությունը բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների Սովետների ձեռքը վերցնելու, նրանք երբեք չեն ունենա ոչ հող, ոչ ազատություն։

Ռևոլուցիայի հենց առաջին օրերից Հայաստանի բոլշևիկները աշխատում են ամենուրեք ստեղծել գյուղացիական Սովետներ և նրանց աշխատանքին տալ դասակարգային բնույթ, աշխատում են Սովետների շուրջը համախմբել չքավոր գյուղացիությանն ու բատրակությանը, հեռու պահել գյուղացիությանը դաշնակցության վնասակար ազդեցությունից։

Լայն աշխատանք ծավալելով գյուղացիական Սովետների ներսում, Հայաստանի բոլշևիկները ելնում էին Լենինի այն հայտնի ցուցումից, որ կալվածատերերի դիմադրությունը ջախջախելու համար անհրաժեշտ է, որպեսզի մարզային և տեղական գյուղացիական դեպուտատների Սովետները իրենց ձեռքը վերցնեն բոլոր հողերի վրա կարգադրություն անելու իրավունքը։

«Տարակույս չկա,— գրել է Լենինը ապրիլին,— որ մեր պարտիայի բոլոր անդամները, բոլոր գիտակից բանվորները, բոլոր ուժերով կաջակցեն գյու-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 333, Հայպետհրատ։

ղացիների դեպուտատների Սովետների կազմակերպմանը, հոգ կտանեն նրանց թիվը մեծացնելու, նրանց ուժերն ամրապնդելու համար, իրենց կողմից կկարեն բոլոր ջանքերը, որպեսզի այդ Սովետների ներսում աշխատանք կատարեն հետևողական և խստորեն—պրոլետարական դասակարգային ուղղությամբ»։[1]

Կատարելով Լենինի այդ ցուցումները, Հայաստանի բոլշևիկները զգալի հաջողություններ ձեռք բերեցին գյուղացիական Սովետների ստեղծման և նրանց միջոցով հողային հարցի լուծման գործում։

«Պայքար» թերթում[2] կարելի է հանդիպել բազմաթիվ հաղորդումների, որտեղ նկարագրվում են գյուղացիական Սովետների ստեղծումը և պայքարը այդ Սովետների ներսում։

1917 թ. ապրիլի 12-ին Շնող գյուղից գրում են, որ գյուղում ստեղծվել է գյուղացիական Սովետ, որը ղեկավարում է գյուղի բոլոր գործերը, բայց դանդաղ է պայքարում հին իշխանության ներկայացուցիչների դեմ։[3]

«Պայքարի» հոդվածագիրը հաղորդում է, որ Լոռվա շրջանի գյուղերում նույնպես ստեղծվել են գյուղացիական Սովետներ, բայց ղեկավարության մեջ մեծ տեղ են գրավում կուլակային տարրերը։ Հոդվածագիրը կոչ է անում սոցիալ-դեմոկրատիային՝ բացատրական լայն աշխատանք կատարել գյուղացիության մեջ։[4]

Ուղունլարից նույն թվի մայիս ամսին հաղորդում են, որ շրջանի գյուղացիական Սովետների ընտրությանը ակտիվ կերպով մասնակցում են նաև կանայք։ Բոլոր գյուղերում ստեղծվել են Սովետներ, և խիստ կարիք է զգացվում սոցիալ-դեմոկրատական աշխատանք կազմակերպող ընկերների։[5]

Մայիսի 28-ին ստեղծվում է Երևանի նահանգային գյուղացիական դեպուտատների Սովետը, բաղկացած 29 հոգուց, որի կազմի մեջ են մտնում նահանգի բոլոր ազգություններին պատկանող գյուղացիների ներկայացուցիչները։[6]

Գյուղացիական Սովետների ստեղծման մասին բազմաթիվ փաստեր կարելի է բերել Հայաստանի տարբեր շրջաններից։ Ստեղծված Սովետներում պայքարը գնալով ավելի է սրվում։ Բոլշևիկյան պարտիան ուժեղացնելով իր ագիտացիոն աշխատանքը գյուղացիության մեջ, գլխավոր հարվածն ուղղում է դաշնակցության դեմ, աշխատելով գյուղացիության պայքարը դնել դասակարգային ինտերնացիոնալ սկզբունքների վրա։

Դաշնակցականները իրենց աշխատանքը չէին սահմանափակում գյուղացիական Սովետներով։ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն պարտիաների հետ միասին, նրանք, գյուղացիական մասսաներին իրենց ազդեցության տակ դցելու, կալվածատիրական հողերի բռնագրավումները կանխելու և ընդհանրապես գյուղացիության դասակարգային գիտակցությունը մթագնելու նպատակով, Փետրվարյան ռևոլյուցիայից հետո ձեռնամուխ են լինում այսպես կոչված «Գյուղացիական ազգային միություններ» կազմակերպմանը։ Այդ միություններում դաշնակցականներն աշխատում են կենտրոնացնել կուլակային տարրե-

[1] Լենին, Երկեր, հատ. 31, էջ 192։
[2] Երբ դեռ բոլշևիկները ակտիվորեն մասնակցում էին նրա աշխատանքներին։
[3] «Պայքար», № 16, 1917 թ.։
[4] Նույն տեղում, № 28, 1917 թ.։
[5] Նույն տեղում, № 34, 1917 թ.։
[6] ՏԵՍ ՀՍՍՌ ՊԿԱ ֆ. 93, գ. 25, թ. 6։

րին, նրանց միջոցով գյուղացիությանը պատվաստել ազգային շովինիզմի թույները։

Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաների, հատկապես դաշնակցության դեմ համառ պայքար էին ծավալում Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը և նրանց ղեկավարությամբ գործող բոլշևիկյան կազմակերպությունները։

1917 թ. մայիսին «Պայքար» թերթում լույս տեսավ ընկեր Ա. Միկոյանի «Գյուղացիական ազգային միությունները և դրությունը Կովկասում» հոդվածը։ Ընկեր Միկոյանը սուր կերպով մերկացնում է դաշնակցության հակաժողովրդական, նացիոնալիստական քաղաքականությունը։ Ցույց տալով, որ Փետրվարյան ռևոլուցիայից հետո Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը շարունակում է ապրել տնտեսական ամենածանր պայմաններում, ընկեր Միկոյանը կոչ է անում գյուղացիությանը՝ անողոք պայքար մղել կալվածատերերի ու կուլակների դեմ, հեռու մնալ դաշնակցական գյուղացիական ազգային միություններից, որոնց նպատակն է գյուղացիներին պահել խավարի ու ստրկության վիճակում, շեղել նրանց դասակարգային պայքարից։ «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան,— գրում է ընկեր Միկոյանը,— կոչ է անում Կովկասի բոլոր ազգերի գյուղացիներին՝ հայերին, թուրքերին, վրացիներին՝ կազմակերպվել միջազգային դասակարգային գյուղացիական միության մեջ, անողոք դասակարգային պայքար մղել կոնտրռևոլուցիոն տիրապետող դասակարգերի դեմ և հանուն մեր բոլորիս երազած լավ ապագայի, կռվել ու կոփել բոլոր ազգերի և բոլոր երկրների աշխատավորության միջազգային համերաշխությունը»։[1]

Անդրկովկասի բոլշևիկները շատ լավ գիտակցում էին, որ առանց ագրարային հարցի արմատական լուծման՝ Անդրկովկասում անհնար է բուրժուազեմոկրատական ռևոլուցիան վերածել սոցիալիստականի։ Ագրարային հարցի լուծման բնագավառում ուղեցույց ունենալով պարտիայի Ապրիլյան կոնֆերենցիայի որոշումները, Լենինի և Ստալինի ցուցումները, Անդրկովկասի բոլշևիկները վճռական կերպով մերկացնում էին հողային հարցի լուծումը մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը հետաձգելու պահանջի կոնտրռևոլուցիոն էությունը։ Բոլշևիկները մերկացնում էին մենշևիկների և կոնտրռևոլուցիոն մյուս պարտիաների այն զրպարտությունները, թե իբր բոլշևիկների կոչը՝ ռևոլուցիոն ճանապարհով կալվածատիրական հողերի բռնագրավման մասին, նշանակում է գյուղում ստեղծել անարխիա։ Բոլշևիկները գյուղացիական լայն մասսաներին ցույց էին տալիս, որ հողային հարցի լուծման հետաձգումը մինչև Սահմանադիր ժողովը, նշանակում է գյուղացիությանը նորից թողնել հողազուրկ վիճակում, կանգնել ռևոլուցիայի կես ճանապարհին։

«Քանի որ Սահմանադիր ժողովի գումարման ժամկետը հայտնի չէ,— գրում է ընկեր Ստալինը,— քանի որ Սահմանադիր ժողովի գումարումը հետաձգում է ժամանակավոր կառավարությունը... ապա դուրս է գալիս, որ փաստորեն հողը պետք է մնա չհերկված, կալվածատերերը մնում են հողի տեր, գյուղացիներն առանց հողի, իսկ Ռուսաստանը, իսկ բանվորները, գյուղացիներն ու զինվորները— առանց բավարար քանակությամբ հացի... գործարանատերերի ու կալվածատերերի կառավարությունը այլ կերպ չի էլ կարող վերաբերվել գյուղացիներին...

[1] «Պայքար» № 31, 1917 թ.։

Այդ պատճառով էլ մենք դիմում ենք ամբողջ Ռուսաստանի գյուղացիներին, ամբողջ գյուղացիական չքավորություններ— իր գործն իր սեփական ձեռքը վերցնել և այն առաջ շարժել։

Մենք կոչ ենք անում նրանց՝ կազմակերպվել ռևոլյուցիոն գյուղացիական Կոմիտեների մեջ (վոլոստային, գավառական և այլն) և, նրանց միջոցով իրենց ձեռքն առնելով կալվածատիրական հողերը, ինքնակամ մշակել դրանք կազմակերպված կարգով։

Մենք կոչ ենք անում այդ կատարել անհապաղ, չսպասելով Սահմանադիր ժողովին և ուշադրություն չդարձնելով ռեակցիոն մինիստրական արկելքներին, որոնք աշխատում են կանգնեցնել ռևոլյուցիայի անիվը...

Սպասելու և մինչև Սահմանադիր ժողով հետաձգելու քաղաքականությունը, բռնադրավումից «ժամանակավորապես» հրաժարվելու քաղաքականությունը... դասակարգերի միջև խուսանավելու (չլինի թե որևէ մեկին վիրավորենք) և տեղում ամոթալի կերպով դոփելու քաղաքականությունը ռևոլյուցիոն պրոլետարիատի քաղաքականությունը չէ»։[1]

Իրականացնելով լենինյան-ստալինյան դիրեկտիվները, Հայաստանի բոլշևիկները, Անդրկովկասի բոլշևիկների հետ միասին, իրենց շուրջը համախմբելով չքավոր գյուղացիությանն ու բատրակությանը, բարձրացնելով նրանց դասակարգային գիտակցությունը, սրում էին դասակարգային պայքարը գյուղում, կազմակերպում գյուղացիությանը՝ առանց սպասելու Սահմանադիր ժողովին, ձեռնամուխ լինել կալվածատիրական հողերի բռնադրավմանը։

Կալվածատիրական հողերի բռնադրավման դեպքերը Հայաստանում սկսվում են ռևոլյուցիայի հենց առաջին օրերից։

1917 թ. մարտի 14-ին Ալեքսանդրապոլի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներ հեռացնում են անտառապահներին և իրենց հանրային օգտագործման տակ վերցնում անտառները։ Չկարողանալով ոչինչ անել, տեղական վարչությունը դիմում է Երևանի նահանգային կոմիսարիատին և խնդրում միջոցներ ձեռք առնել։[2]

Գյուղացիները խլում էին նաև պետական, կալվածատիրական, եկեղեցական հողերը և օգտագործում դրանք։

1917 թ. ապրիլի 10-ին Երևանի Հողագործության վարչությունը բողոքում է Երևանի նահանգային կոմիսարիատին և Գործադիր կոմիտեին, որ Ռընդամալ գյուղի բնակիչները խլել են վարձակալ Սարգիս Երանովի հողերը, բաժանել իրենց մեջ՝ խախտելով գոյություն ունեցող բոլոր մասնատիրական և պետական օրենքները։ Վարչությունը խնդրում է ձեռք առնել կտրուկ միջոցներ, վերջ տալ գյուղացիության կողմից կատարվող նման քայլերին։[3]

Ապրիլի 14-ին նույն վարչությունը դիմում է Երևանի նահանգային կոմիսարիատին և հայտնում, որ Կայա-Խարաբա գյուղի ադրբեջանցի բնակիչները խլել են նույն գյուղի վարձակալ Համո-Ուսո-Օղլու հողերը և բաժանել իրար մեջ։[4]

Հետաքրքիր է այն, որ պետական ապարատը կրքոտությամբ պաշտպանում է ինչպես հայ, այնպես և ադրբեջանցի կալվածատերերի, կուլակների շահերը։

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 3, էջ 39—41։
[2] ՏԵՍ ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. № 39/103, գ. 105, թ. 2։
[3] Նույն տեղում, ֆ. № 39/103, գ. 105 թ. 3։
[4] Նույն տեղում, ֆ. № 39/103, գ. 105 թ. 4

Այդ է վկայում հետևյալ փաստը։ Էջմիածնի վանքը դեռևս 1912 թվից սկսած Գյոկ-Քիլիսայում գտնվող իր վանքապատկան հողերից ավելի քան 138 դեսյատին վարձակալությամբ 6 տարի ժամկետով տվել էր Ն. Հեջիլու գյուղի կուլակ Հաջիմիր-Ջալալ Միր-Ջաֆար Օղլուն, Գյոկ-Քիլիսա գյուղի կուլակ Մաշադի-Հուսեին Հաջի Սաֆար Օղլուն և Հաջի Մուղան գյուղի կուլակ Հաջի-Մահմեդ Օղլուն։ Փետրվարյան ռևոլուցիայից հետո Գյոկ-Քիլիսայի գյուղացիները բռնագրավում են վանքապատկան այդ հողերը և իրենք են օգտագործում, սպառնալով վարձակալ կուլակներին, որ եթե նրանք դիմեն կառավարական օրգաններին և փորձեն հողը հետ գրավել, ապա, գյուղացիները նրանց կսպանեն։ Չնայած գյուղացիների զգուշացումներին, նշված երեք կուլակներն էլ մայիսի 2-ին հատուկ բողոքով դիմում են Երևանի նահանգային կոմիսարիատին, պահանջելով, որ կառավարությունը վճռական միջոցների դիմի և վերադարձնի հողերը իրենց։[1]

Սակայն այդ կուլակների բողոքները և նահանգային կոմիսարիատի բոլոր կարգադրությունները չեն կարողանում ազդել գյուղացիության վրա։ Գյոկ-Քիլիսայի գյուղացիները չեն ենթարկվում ոչ մի որոշման, վերջնականապես դուրս են շպրտում վարձակալներին հողից և իրենք են սկսում հավաքել բերքը։ Այս անգամ արդեն կուլակների շահերի պաշտպանության դերում հանդես է գալիս Երևանի հոգևոր թեմը, պահանջելով նահանգային կոմիսարիատից՝ ամենավճռական միջոցների դիմել Գյոկ-Քիլիսայի գյուղացիության դեմ և պաշտպանել թե՛ վանքի և թե՛ այդ կուլակների շահերը։ Երևանի հոգևոր թեմի բողոքագրի մեջ, որն ուղարկվել է հունիսի 27-ին, ասված է. «Գյոկ-Քիլիսա գյուղի գյուղացիները դիմադրում են նույն գյուղի մոտ գտնվող վանքապատկան հողերի վարձակալողների կողմից բերքի հավաքմանը։ Նկատի ունենալով, որ այդ հողի վրա կարող են առաջանալ անցանկալի հետևանքներ, խնդրում ենք ձեռք առնել հնարավոր խիստ միջոցներ»։[2]

1917 թ. մայիսին Երևանի նահանգի Ողջաբերդ և Շոր-Բուլաղ գյուղերի բնակիչները, բռնագրավում են Կորգանովների ամբողջ կալվածքը և ցանում են՝ ինչպես ցանկանում են։

Այդ կալվածքի բռնագրավման շուրջը ստեղծված գրագրություններից երևում է, որ տեղական իշխանությունները ոչ մի քայլի չեն կարողանում դիմել, գյուղացիները գրավում են Կորգանովների կալվածքը և օգտագործում։[3]

Այս բոլոր փաստերը վկայում են, որ ագրարային շարժումները, կալվածատիրական, վանքապատկան, կուլակային հողերի բռնագրավումները Հայաստանում, Փետրվարյան ռևոլուցիայից հետո մեծ ծավալ էին ստացել։

1917 թ. մայիսին Լենինի գրած այն խոսքերը, թե «Ագրարային շարժման աճումն ամբողջ Ռուսաստանում այժմ ամենից ակնհայտ ու անվիճելի փաստն է բոլորի համար»,[4] ամբողջովին վերաբերում էր նաև Հայաստանին։

Գլխավորելով գյուղացիության պայքարը հողի բռնագրավման համար, Հայաստանի բոլշևիկները, Անդրկովկասի բոլշևիկների հետ միասին, հետևողական կերպով կատարում էին այն ցուցումները, որ Լենինը տալիս էր պարտիային՝ սրել դասակարգային պայքարը գյուղում, առանց որի բուրժուա-դեմոկ-

---

[1] ՀՍՍՌ ՊԿԱ ֆ. № 39/103, գ. 105, թ. 19։
[2] Նույն տեղում, թ. 40։
[3] Նույն տեղում, թ. 22, 89։
[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 344։

ռատական ռևոլուցիան սոցիալիստականի վերաճելու հարցը գյուղում չի կարող հաջողություն ունենալ։ Ահա թե ինչ է գրում Լենինը այդ մասին. «Որքան ավելի վճռական ու ավելի հետևողական լինի կալվածատիրական հողատիրության խորտակումն ու վերացումը, որքան ավելի վճռական ու ավելի հետևողական լինի բուրժուա-դեմոկրատական ագրարային բարեփոխությունը Ռուսաստանում ընդհանրապես, այնքան ավելի մեծ ուժով ու արագությամբ կզարգանա գյուղատնտեսական պրոլետարիատի դասակարգային պայքարն ընդդեմ ունևոր գյուղացիության (գյուղացիական բուրժուազիայի)»։[1]

Ամառվա ամիսներին գյուղացիության պայքարը կալվածատիրության և կուլակության դեմ ավելի սուր բնույթ ստացավ։ Հայ աշխատավոր գյուղացիությունը գնալով ավելի է համոզվում դաշնակցության հակաժողովրդական քաղաքականության մեջ, երես թեքում նրանից, ավելի սերտորեն համախմբվում բոլշևիկյան պարտիայի շուրջը։

1917 թ. հուլիսին «Պայքար» թերթի թղթակիցը Սանահինից գրում է, որ Լոռվա շրջանում «ամենուրեք գյուղերում նկատվում է պայքարը հների և նորերի միջև։ Որքան մեծ է այդ գյուղերում տիրահոչակ դաշնակցականների ազդեցությունը, այնքան ուժեղ է պայքարը... բայց հաղթողը, իհարկե հանդիսանում է միշտ գյուղի դեմոկրատիան, որը այսօր շատ լավ է գիտակցել, թե ովքեր են եղել դաշնակցականները և ինչով են նրանք զեկավարվել ու զեկավարվում»։[2] Այնուհետև թղթակիցը նկարագրում է, որ հունիսի 3-ին, երբ տեղի ունեցավ Սանահին գյուղի գյուղացիական Սովետի ընտրությունները, Սովետում ընտրվեցին ժողովրդի ներկայացուցիչները, ռևոլուցիոն տարրերը։ Սակայն Սանահինի թղթակիցը նշում էր, որ գյուղացիության պայքարը միայն ընտրությունների շուրջը չէր գնում. Լոռվա շրջանում մի քանի վեճեր և տարաձայնություններ են ծագել գյուղացիների և կալվածատերերի միջև, ըստ որում կառավարությունն այդ վեճերը հարթելու համար ավելացրել է միլիցիոներների թիվը։[3] Հասկանալի է, որ այստեղ խոսքը հասարակ վեճերի ու տարաձայնությունների մասին չէ։ Հենց այն հանգամանքը, որ կառավարությունը ավելացնում է շրջանի միլիցիոներների քանակը, վկայում է այն սուր պայքարի մասին, որ գնում էր Լոռվա շրջանում աշխատավոր գյուղացիության և կալվածատիրության միջև։

Դաշնակցության ազդեցության անկման և գյուղում դասակարգային պայքարի սրման մասին է վկայում նաև հետևյալ փաստը։ Հունիսի 9-ին Ջալալ-Օղլուց գրում են. «Մի մեծ երևույթ է նկատվում գավառում՝ այս մեծ հեղափոխությունից հետո, երևույթ, որ չի կարելի անտես առնել, ամբողջ սրտով չողջունել։

Հայ գյուղացին սկսում է արթնանալ, սթափվել, ճանաչել իր իսկական բարեկամներին, ազատագրվել «սոցիալիստ» դաշնակցականներից։

Լոռվա կենտրոնում Ջալալ-Օղլում պարզված է ՌՍԴԲ կուսակցության դրոշակը, հիմնված է տեղական կոմիտե»։[4]

Որքան ավելի են ծավալվում հողերի բռնագրավումները, Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաները այնքան ավելի են ուժեղացնում իրենց քայքայիչ աշխատանքը։ 1917 թ. մայիսին տեղի ունեցավ բանվորների և գյու-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 354–355։
[2] «Պայքար», № 44, 1917 թ.։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում, № 48, 1917 թ.։

ղացիների դեպուտատների երկրային Սովետի համագումարը։ Համագումարը չլուծեց ագրարային հարցը և կոնտրռևոլուցիոն բոլոր պարտիաների ջանքերով որոշում ընդունեց՝ թողնել այդ հարցի լուծումը մինչև Սահմանադիր ժողովը։ Համագումարի որոշումները լուրջ նշանակություն չունեցան գյուղացիների համար և վերջիններս շատ տեղերում շարունակեցին իրենց ձևով լուծել հողային հարցը, բռնագրավել կալվածատիրական, վանքապատկան, պետական, կուլակային հողերը և բաժանել իրար մեջ։

Հողային հարցի լուծման այդ եղանակը շատ էր անհանգստացնում ինչպես Անդր. Հատուկ կոմիտեին, այնպես էլ կոնտրռևոլուցիոն բոլոր պարտիաներին, որովհետև չնայած համագումարի որոշումներին և Անդր. Հատուկ կոմիտեի կողմից հրապարակված բազմաթիվ հրամաններին, նախազգուշացումներին, ռևոլուցիոն գյուղացիության դեմ կիրառվող ռեպրեսիաներին, գյուղացիությունը նոր թափով և ավելի վճռական կերպով դիմում էր հողի բռնագրավումներին։

Գյուղացիությանը դասակարգային պայքարից շեղելու, Անդրկովկասում ծավալվող գյուղացիական շարժումները և հողի բռնագրավումները կանխելու նպատակով Անդրկովկասյան կոնտրռևոլուցիան հունիս ամսին ձեռնամուխ եղավ այսպես կոչված Անդրկովկասի գյուղացիական համագումարի հրավիրմանը։

Համագումարը բացվեց 1917 թ. հունիսի 20-ին, Թիֆլիսում։ Դա Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն, նացիոնալիստական պարտիաների մի հավաքածու էր։ Համագումարում կազմելով մեծամասնություն, էսեռա-մենշևիկյան և նացիոնալիստական պարտիաները կարողացան համագումարի ղեկավարությունը իրենց ձեռքը վերցնել և քննել այնպիսի հարցեր ու անցկացնել այնպիսի որոշումներ, որոնք ոչ մի կապ չունեին գյուղացիության շահերի հետ։

Կատաղի հարձակումներ գործելով կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի և ամբողջ հողերի ազգայնացման բոլշևիկյան ծրագրի դեմ, կոնտրռևոլուցիոն պարտիաներին հաջողվեց անցկացնել այնպիսի բանաձև, որը դատապարտում էր գյուղացիության կողմից հողերի բռնագրավումը և ագրարային հարցի լուծումը կրկին թողնում էր Սահմանադիր ժողովին։

Համագումարն ամբողջովին անցավ ժամանակավոր կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության պաշտպանության նշանաբանով։

Համագումարն ստեղծեց կոնտրռևոլուցիոն պարտիաների ներկայացուցիչներից բաղկացած Գյուղացիական դեպուտատների երկրային կենտրոն։ Այդ Կենտրոնը անմիջապես դաշինք կնքելով կալվածատիրության հետ և ստանալով նրանից ֆինանսական օժանդակություն, իր ամբողջ գործունեությունն ուղղեց գյուղի աշխատավորական մասսաների դեմ։

Անդրկովկասի բոլշևիկների հետ միասին, Հայաստանի բոլշևիկները անողոք պայքար ծավալեցին գյուղացիական կենտրոնի դեմ, ցույց տալով, որ հողային հարցը կարող են լուծել միայն բանվորական, գյուղացիական ու զինվորական Սովետները և իրենք՝ գյուղացիները, ռևոլուցիոն ճանապարհով։

Չնայած հուլիսյան դեպքերից հետո ժամանակավոր կառավարության կատաղի հարձակմանը և այսպես կոչված «սոցիալիստական» պարտիաների կատարյալ դավաճանությանը ռևոլուցիային, նրանց անցմանը իմպերիալիզմի լագերը, շնորհիվ բոլշևիկների կատարած եռանդուն աշխատանքի, գյուղացիական շարժումները ընդհուպ մինչև Հոկտեմբերյան ռևոլուցիան, ինչպես

ողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում, ավելի մեծ ծավալ են ստանում։ Ավելի մասսայական են դառնում կալվածատիրական, վանքապատկան և կուլակային հողերի բռնագրավումները։ Աշխատավոր գյուղացիությունը ավելի մասսայաբար ու անվերադարձ կերպով երես է թեքում կեղծ «սոցիալիստական» ու նացիոնալիստական պարտիաներից։

Ագրարային հարցը համարելով ռուսական ռևոլուցիայի կարևոր հարցերից մեկը, բոլշևիկյան պարտիան՝ Լենինի և Ստալինի գլխավորությամբ, հուլիսյան օրերից հետո նոր ձևով դրեց նրա լուծումը։ Լենինը պարտիային ուսուցանում էր, որ այժմ խաղաղ ճանապարհով չի կարելի լուծել հողային հարցը, որ գյուղացիությունը այլևս խաղաղ ճանապարհով չի կարող հող ստանալ, հողային հարցի լուծումը այժմ հնարավոր է միայն զինված ապստամբության միջոցով։ «Հողի անցումը գյուղացիներին այժմ,— գրում է Լենինը հուլիսի 10-ին,— անհնար է առանց զինված ապստամբության, որովհետև կոնտրռևոլուցիան, իշխանությունը վերցնելով, լիովին միացել է կալվածատերերի, որպես դասակարգի, հետ»։[1]

Կատարելով լենինյան այդ ցուցումները, Հայաստանի բոլշևիկները եռանդուն աշխատանք ծավալեցին գյուղացիության մեջ։

Հուլիսյան դեպքերից հետո ավելի հետևողական ու վճռական է դառնում աշխատավոր գյուղացիության պայքարը ժամանակավոր կառավարության, կուլակության, կալվածատիրության դեմ և ավելի մասսայական են դառնում հողերի բռնագրավումները։

1917 թ. հուլիսին Նոր-Բայազետում գյուղացիական դժգոհությունները այնպիսի ծավալ են ստանում, որ ռայոնի կոմիսարը դիմելով Նահանգային կոմիսարիատին և Անդր. Հատուկ Կոմիտեին, խնդրում է զինվորական դգնություն՝ շրջանում կարգը վերականգնելու համար։[2]

Գյուղացիները բռնագրավում են ոչ միայն առանձին կալվածատերերի, կուլակների հողերը, այլև պետական, ակցիոներական ընկերությունների հողերը, բոլորովին հաշվի չառնելով այն հանգամանքը, որ պետական ապարատը կդիմի այդպիսի դեպքերում ավելի խիստ միջոցների։

Օգոստոսի 24-ին Արազդայանի Շերեմետովի գյուղատնտեսական և առևտրա-արդյունաբերական ակցիոներական ընկերությունը, որի վարչությունը գտնվում էր Պետրոգրադում, Երևանի Նահանգային գործադիր կոմիտեին հետևյալ դիմումն է ուղարկում «Պատիվ ունեմ հայտնելու Նահանգային Գործադիր Կոմիտեին, որ վարելահողերի և խոտհարքների ինքնակամ բռնագրավումներ սկսել են հանդես գալ Արազդայան կալվածքի վարձակալող գյուղացիների մեջ, ըստ որում խախտվում են ոչ միայն կալվածատիրական իրավունքները, այլև առանձին վարձակալողների իրավունքները։ Բացի դրանից՝ Դավալու կոչվող գյուղի բնակիչները եկել ու սկսել են տեղ-տեղ ինքնակամ կերպով վարել կալվածքի հողերը ու հնձել խոտը, տանելով Դավալու։

Ը նկատի ունենալով վերոհիշյալը, թախանձագին խնդրանքով դիմում եմ Նահանգային Գործադիր Կոմիտեին, միջոցներ ձեռք առնել ինչպես Արազդայան կալվածքի, այնպես էլ առանձին վարձակալող գյուղացիների գույքային իրավունքները պաշտպանելու համար, քանի որ առանց Նահանգային Գործա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 210, Հայպետհրատ։
[2] ՏԵՍ ՀՍՍՌ ՊԿԱ ֆ. 391103, գ 105, թ. 112։

դեր Կոմիտեի կողմից այդ իրավունքների համապատասխան պաշտպանության, կստեղծվի լրիվ անարխիա...»[1]

Նահանգային կոմիսարիատը անմիջապես կարգադրություն է անում Երևանի գավառային կոմիսարին, որպեսզի վերջինս վճռական քայլերի դիմի և պաշտպանի Շերեմետովի ակցիոներական ընկերության շահերը։

Սակայն, չնայած Նահանգային կոմիսարիատի կարգադրություններին և սպառնալիքներին, մինչև 1917 թ. վերջը գյուղացիները համարյա ոչ մի պարտավորություն էլ չեն կատարում և հողը մշակում են այնպես, ինչպես իրենք են ցանկանում։

Դժգոհությունները մասսայական բնույթ են ստանում Գորիսի շրջանում։ Փետրվարյան ռևոլուցիայից հետո այստեղ գյուղացիները բռնագրավում են պետական ու կալվածատիրական անտառները։ Կառավարական օրգանները դիմում են անգամ բռնությունների, բայց գյուղացիները շարունակում են իրենց գործը։

Մի շարք վայրերում, ի պատասխան անտառապահների կողմից կիրառվող բռնությունների, գյուղացիները դիմում են զինված դիմադրության։ Գորիսի անտառապահության վարչության պետն իր զեկուցագրում նշում է, որ գյուղացիների կողմից եղել են՝ «Մի անտառապահի վիրավորում, մի քանի անտառապահների զինաթափում, հարձակում երկու անտառապահների վրա նրանց սպանելու նպատակով» և երկու տեղում իրեն դիմադրություն ցույց տալու փորձ։[2]

Զինված պայքարի միջոցով կալվածատիրական, վանքապատկան հողերը բռնագրավելու մասին են վկայում նաև հետևյալ փաստերը։

Գոմաձորի թեմական թեմի հողերի գրավման մասին տրված զեկուցագրի մեջ ասված է.

«1917 թ. սկզբներում, երբ մեր երկիրը անիշխանություն տիրեց, Գոմաձորի գյուղացիք օգտվելով այդ հանգամանքից, ամբողջ հասարակությունով բռնի ուժով և զինու զորությամբ դուրս հանեցին վանքի կանոնավոր կապալառուին՝ Քարվանսարեցի Պ. Գարսեվանին և իրենք տիրեցին, հաստատ համոզվելով, որ վանքի կալվածքները բաժանելուց այդ իրենց բաժին կընկնի»։[3]

Գոմաձորի գյուղացիները չեն սահմանափակվում վանքապատկան հողերի բռնագրավմամբ, նրանք բռնագրավում են նաև վանքապատկան ջրաղացը։

Այդ մասին ահա թե ինչ է գրում Գոմաձորի վանքի վարդապետ Մաշտոցը. «1917 թ. սկզբներում, Գոմաձոր գյուղի բնակիչները զինու զորությամբ Քարվանսարայի արենդատոր պ. Գարսևան Վարդանյանին հեռացրին վանքապատկան Ելենովկային կից ջրաղացից և իրանք եղան տեր»։[4]

Այդ մասին է վկայում նաև Սևանի վանքի կառավարիչը 1919 թ. Ներքին Ախտայի հաշտարար դատավորին գրած զեկուցագրում. «1917 թվին Գոմաձորի բնակիչները, օգտվելով եղած անիշխանությունից, Ելենովկայի մոտ եղած վանքապատկան ջրաղացի արենդատոր, քարվանսարացի պ. Գարսևան Վարդանյանի վրա են հարձակվում և զինու զորությամբ տիրա-

[1] ՀՍՍՌ ՊԿԱ. ֆ. 39/103, գ. 105, թ. 102։
[2] ՀՍՍՌ ՊԿԱ ֆ 67/199, գ. 28, թ. 24—25։
[3] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 37, գ. 117 թ. 46։
[4] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. 37, գ. 117, թ. 43, Նույնի մասին տես ֆ. 37, գ. 117, թ. 17—18, 32, գ. 120, թ. 28։

պետում են, դուրս անելով արենդատորին, վանքին զրկելով իրեն մի քանի տասնյակ տարիների սեփականությունից։ Այս բռնի տիրապետությունը տևում է մինչև 1918 թ. մարտ ամիսը...»։[1]

Ինչպես տեսնում ենք, Գոմաձորի գյուղացիության պայքարը վանքի ու կապալառուների դեմ, բավական սուր բնույթ էր ստացել։ Ըստ որում կարևոր է այն, որ մեկ տարուց ավելի նրանք իրենց ձեռքումն են պահել վանքից բռնագրավված ինչպես ջրաղացը, այնպես էլ հողերը։ Միայն դաշնակցության տխրահռչակ տիրապետության հաստատումից հետո անողոք կերպով ճնշվում են Գոմաձորի գյուղացիների ռևոլյուցիոն ելույթները, նրանցից հետ է խլվում ինչպես ջրաղացը, այնպես էլ վանքապատկան հողերը և վերադարձվում վանքին։

Սեպտեմբերի 14-ին «Կովկազսկիյ ռաբոչիյ» թերթի թղթակիցը «Հողերի բռնագրավումներն ընդունում են լայն չափեր» հոդվածում նկարագրում է, թե ինչպես Բորչալուի և Ղազախի գավառների հայ գյուղացիները մյուս շրջանների գյուղացիների նման մասսայաբար գրավում են պետական, կալվածատիրական հողերը և կոլեկտիվ կերպով օգտագործում։

«Բորչալուի գավառում և Ելիզավետպոլի նահանգում (Ղազախի գավառում),— գրում է թղթակիցը,— որքան գնում, այնքան ավելի են գյուղացիները բռնագրավում աղալարական, կալվածատիրական, բաժնեկալվածային և վարձակալական ամբողջ հողերը։ Առայժմ բռնագրավում են արոտավայրերն ու խոտհարքները, բայց երբեմն բռնագրավում են նաև վարելահողերը։ Այդ հողերը բռնագրավվում են տվյալ գյուղի ամբողջ բնակչության կամ մի քանի գյուղերի բնակիչների կողմից միասին, բայց ոչ առանձին անհատների կողմից»։[2]

Աշխատավոր գյուղացիության պայքարի մյուս ձևը գա հարկերի վճարումներից հրաժարվելն էր։ Կալվածատիրական հարկերից մասսայական ձևով հրաժարվելու դեպքեր են տեղի ունենում 1917 թ. օգոստոսին Բորչալուի հայկական գյուղերում։ Հարկերից գյուղացիների հրաժարվելը այնպիսի մասսայական բնույթ էր ստացել, որ այդ փաստը հարկադրված խոստովանում էր անգամ դաշնակցական ու հայ մենշևիկյան մամուլը։

«Բորչալուի գավառում ևս,— գրում է «Պայքարը»,— տեղի ունեն տարաձայնություններ գյուղացիների և կալվածատերերի միջև։ Կալվածատեր Արամյանի հայկական Արամզեն և Նալբանդ գյուղերում և թուրքական Այրում, Լեզբադին ու մի քանի այլ գյուղերում չեն ցանկանում վճարել բահրա... Նույնպիսի վիճակում են Լոռիս-Մելիքյանի կալվածքներում ապրող Ծոճկանի գյուղացիք, որոնք հրաժարվում են բահրա վճարել»։[3]

Գյուղում կատարվող դասակարգային պայքարի ավանգարդում դնում էին բատրակներն ու գյուղական բանվորները։ Այդ տեսակետից պետք է հիշել Երևանի նահանգի «Ղրա-Շան-Գիրեյի» կալվածքի բանվորների ու ծառայողների համառ պայքարը՝ իրենց տնտեսական և քաղաքական պահանջների բավարարման համար։

1917 թ. սեպտեմբերի 24-ին կալվածքի բանվորները և ծառայողները դիմում են Երևանի Սովետին, որպեսզի նա միջոցներ ձեռնարկի և պարտադրի

[1] ՀՍՍՌ ՊԿԱ. ֆ. 37, գ. 117. թ. 13–14։
[2] «Կավկազսկիյ Ռաբոչիյ» № 149, 1917 թ.
[3] «Պայքար» № 100. 1917 թ.։

կալվածքի տեր Քսենյա Դիտովային՝ բավարարելու իրենց տնտեսական պահանջները, այն է՝ աշխատավարձը ավելացնել 30—50 տոկոսով, մթերքների, հատկապես ցորենի վրա սահմանել կայուն գներ և այլն»։[1]

Երևանի Սովետը և Գործադիր Կոմիտեն, որը տեղական իշխանության կցորդն էր, կալվածքի բանվորների և ծառայողների պահանջների բավարարման գործում ցուցաբերում է խիստ անվճռականություն, որից օգտվելով կալվածքի տեր Դիտովան հրաժարվում է նրանց պահանջները բավարարելուց։[2]

Այդ պահանջը մերժվելուց հետո՝ հոկտեմբերի 10-ին կալվածքի «...բոլոր բանվորների և ծառայողների կողմից հայտարարվում է գործադուլ»։[3] Կալվածքի տեր Դիտովան հարկադրված համաձայնվում է՝ բավարարել բանվորների պահանջները, բացի մեկ կետից, սակայն բանվորներն ու ծառայողները ոչ մի զիջում չընդունելով, շարունակում են գործադուլը։ Այս անգամ Դիտովան համաձայնվում է բավարարել բանվորների բոլոր պահանջները։ Կալվածքի բանվորական կոմիտեն դա համարում է իրենց «առաջին հաղթանակը»։[4]

Այդ հաղթանակից հետո բանվորները նոր թափով են շարունակում պայքարը։ Հոկտեմբեր ամսին կալվածատիրոջը ներկայացնում են նոր պահանջագիր, որտեղ առաջարկվում էր սահմանել 8 ժամյա բանվորական օր, ընտրել բանվորական կոմիտե, առանց որի համաձայնության կալվածքի տերը իրավունք չպետք է ունենար բանվորներին և ծառայողներին ազատել աշխատանքից, տուգանքներ նշանակել և այլն։ Պահանջվում էր կազմել հաշտարարության. աշխատանքից ազատվողները, նայած ստաժի, պետք է ստանային լրացուցիչ վարձատրություն, հիվանդության ժամանակ բանվորներին պետք է վճարվեր փող և այլն։[5]

Հիշատակության արժանի է հատկապես Նոր-Բայազետի գյուղացիության պայքարը կալվածատեր Մատուրովների դեմ։ Մատուրովները Հայաստանի ամենախոշոր կալվածատերերից էին։ Նրանց կալվածքը բաղկացած էր ավելի քան 5.000 դեսյատին անտառից, հարյուրավոր դեսյատին վարելահողից, խոտհարքից, այգիներից և այլն, ունեին նաև հսկայական քանակությամբ անասուններ։ Մատուրովների կալվածքի մի մասը, հատկապես անտառները, օգտագործվում էր պետական ազնվականական հողային բանկի Անդրկովկասի բաժանմունքի կողմից, իսկ մի զգալի մասը տրված էր վարձակալությամբ ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ զինվորական կազմակերպություններին։

Նոր-Բայազետի գավառի հարյուրավոր և հազարավոր աշխատավոր գյուղացիների «խաղաղ» թալանը Մատուրովների կողմից, շարունակվում էր մինչև Փետրվարյան ռևոլուցիան։ Ռևոլուցիայից հետո, Հայաստանի մյուս շրջանների գյուղացիության հետ միասին, վճռական պայքար են սկսում նաև Նոր-Բայազետի գավառի գյուղացիները։ Հողազուրկ գյուղացիությունը հենց սկզբից դիմում է կալվածատիրական հողերի բռնագրավմանը։ 1917 թ. ապրիլից սկսած Արզաքյանդի, Աղվերանի, Ալափարսի, Բժնու, Դալլարի և մի շարք այլ գյուղերի բնակիչներ բռնագրավում են Մատուրովների վարելահո-

1 ՀՍՍՌ ՊԿԱ ֆ. 55 119, գ. 15, թ. 3։
2 ՀՍՍՌ ՊԿԱ ֆ. 93, գ. 15, թ. 1—14։
3 Նույն տեղում, 93, գ. 15, թ. 15։
4 Նույն տեղում, 55 119, գ. 15 թ. 12։
5 Նույն տեղում, 55 119, գ. 15 թ. 13—14։

ները, խոտհարքը, անտառները, բաժանում իրար մեջ և օգտագործում։ Անդր. Հատուկ Կոմիտեն և տեղական իշխանությունները դիմում են ամեն տեսակ միջոցների, մինչև իսկ զինված ուժի, բայց ոչինչ անել չեն կարողանում։ Ի պատասխան ռեպրեսիաների՝ գյուղացիները 1917 թ. ամռանը դրավում են նաև նրանց ցանքատարածությունները, բաժանում իրար մեջ և բերքահավաքը կատարում իրենք։ Ահա թե ինչպես է նկարագրում Ծատուրովների կալվածքի կառավարիչ Փարվանյանցը այդ կալվածքի բռնագրավման պատմությունը 1917 թ. հունիսի 10-ին Անդր. Հատուկ Կոմիտեին գրած դիմումում։

«...Ծատուրովների խաղաղ տիրությունը (իրենց կալվածքի վրա — Ռ. Մ.) շարունակվեց մինչև սեպտ ապրիլ ամիսը, իսկ հեղաշրջումից հետո համագյուղացիները սկսել են ինքնակամ կերպով բռնագրավել իրենց հողակտորների մոտ գտնվող հողերը։

Հենց որ գյուղացիները սկսեցին հանդես բերել իրենց հափշտակողական բնազդները, հենց որ գյուղացիական ջարդերի առաջին ծիծեռնակները երևացին Արզաքյանդում, և երբ գյուղացիները կատարեցին առաջին բռնագրավումները, ես անմիջապես գնացի Երևան և բոլորի մասին մանրամասնորեն զեկուցեցի Գործադիր կոմիտեին։

Եթե բռնագրավումների առաջին օրերը խիստ միջոցառումներ կիրառվեին, ապա հափշտակումները չէին տարածվի և ժամանակավոր կառավարության համար չէր ստեղծվի տագնապային վիճակ, բայց այստեղ հարցին մոտեցան զգուշորեն և արմատախիլ չարեցին չարիքը, որի պատճառով էլ գործը այժմ բարդացել է և պահանջում է զինվորական ուժի միջամտություն. այլապես անհնար է դադարեցնել ջարդերը։

Գործադիր կոմիտեն ուղարկեց երկու պատգամավորների, որոնք հավաքեցին համագյուղացիներին և հայտնեցին, որ այլևս բռնություն չկատարեն. և ուրիշ ոչինչ։ Նրանց մեկնելուց հետո, հենց մյուս օրը, գյուղացիները բոլորովին հեռացրին ինձ, բռնագրավեցին բոլոր հողերը, բաժանեցին մեր հողամասերը իրար մեջ... գյուղացիները մասսայականորեն սկսել են վարել մեր հողերը, խոտհարքները բաժանել իրար միջև և վարելահող են դարձրել։ Հարևան գյուղացիները նույնպես սկսել են վարել, այդ հողերով անցկացնել առուներ, սկսել են խոտհարքներում ծառեր տնկել։ Մի խոսքով՝ սկսել են տնօրինել որպես իրենց սեփականությունը, և ինձ կարգադրել են չխանգարել իրենց, սպառնալով վայրենի դատաստանով։ Ես նորից դիմեցի Գործադիր կոմիտեին, բայց այնտեղից օգնություն չստացա։ Վերջապես, սկսել են կտրատել անտառները և ես, կանխատեսելով սարսափելին՝ կալվածքի լրիվ ոչնչացումը. դիմեցի կոմիտեին նոր խնդրանքով, հեռագիր ուղարկեցի Անդրկովկասյան Հատուկ կոմիտեին, բայց ոչ մի տեղից օգնություն չստացա ու Ծատուրովների կալվածքն ամբողջությամբ ավերվեց։ Այժմ կտրատում են անտառները և եթե հեռագրով կարգադրություն չանեք, ապա այնտեղից շուտով միայն հիշողություն կմնա։

Ծատուրովների կալվածքում կա մինչև հարյուր գլուխ աշխատող և կաթնատու անասուն, այժմ գյուղացիները հրամայում են շտանել անասունները արոտավայրերը, որովհետև նրանք չեն ճանաչում Ծատուրովների իրավունքը այն արոտավայրերի նկատմամբ, որ արդեն գրավել են իրենք...

Վարակը շատ շուտ տարածվեց շրջակայքում և այժմ արածում են ան-

տաններում ու արոտավայրերում՝ Արզաքյանդ, Աղվերան, Ալափարս, Բժնի, Դալլար և ուրիշ գյուղերի բնակիչների անասունները...

Վերոհիշյալի մասին զեկուցում եմ Կոմիտեին և խոնարհաբար խնդրում կալվածքն ուղարկել զինվորական ուժ և դադարեցնել հետագա ավերումը... Ազգաբնակչությունը Արզաքյանդում ընտրել է Գործադիր կոմիտե և հենց այդ Կոմիտեն է, որ բնակչությանը հրահրում է դեպի ավերումներ...

Բոլոր ազատ հողերը և խոտհարքներն արդեն բռնագրավված են գյուղացիների կողմից։ Բացի դրանից, մենք ունենք արտեր, որոնք մի ամսից հետո կհասնեն, բայց մեր ցանքերը նույնպես գյուղացիները բաժանել են իրար մեջ։ Յուրաքանչյուրը ստացել է իր բաժին արտը և հատուկ նշաններով՝ ցուցափայտերով, քարերով, ակոսներով և այլն, նշել է իր բաժնի սահմանները։

Բացարձակ կերպով ասում են, որ ինձ թույլ չեն տա բերքը հավաքել, որ կհնձեն բոլոր մեր արտերը և բերքը կվերցնեն, և եթե ես սկսեմ խանգարել ու անհանգստացնել նրանց իմ բողոքներով, ապա ինձ կսպանեն»։[1]

Անդրկովկասյան Հատուկ կոմիտեն կարգադրություններ է անում զինված ուժի միջոցով պաշտպանել Մատուրովների կալվածատիրական իրավունքը, բայց այդ դեպքում ևս նա անզոր է գտնվում ճնշել գյուղացիների դիմադրությունը։ Գյուղացիները կանգ չեն առնում զինվորական միջամտության առաջ, չեն վախենում նրանից և վճռական կերպով կատարում են հողի բռնագրավումները։

Հուլիսի 18-ին Անդր. Հատուկ կոմ.-ի անգամ Ա. Զիսենկելին № 5050 գրությամբ հետևյալ կարգադրությունն է անում Երևանի նահանգային գործադիր կոմիտեին. «Ուղարկելով կից պետական հողային բանկի Անդրկովկասյան բաժանմունքի 1917 թ. հունիսի 8-ի № 2388 դիմումը և Մատուրովների հեռագրի պատճենը, խնդրում եմ միջոցներ ձեռնարկել գործը հետաքննելու և կամայականություններին վերջ տալու համար։ Հետևանքների մասին հայտնեցեք։

Ա. Զիսենկելի»։[2]

Երևանի նահանգային կոմիսարիատը մեկը մյուսի ետևից հեռագրեր է ուղարկում Անդր. Հատուկ կոմ.-ին՝ Մատուրովների կալվածքը պաշտպանելու համար իր կողմից կիրառվող միջոցառումների մասին, բայց հուլիսի 19-ին արդեն հարկադրված է լինում խոստովանել, որ առանց զինվորական մեծ ուժերի միջամտության ի վիճակի չէ կանխելու կալվածքների բռնագրավումները գյուղացիության կողմից, որ ագրարային շարժումը ընդգրկել է Երևանի ամբողջ նահանգը։ Ահա այդ զեկուցագիրը՝

«Անդրկովկասյան Հատուկ կոմիտեին

Վերադարձնելով Հատուկ կոմիտեի սթ հուլիսի 11-ի № 6118 գրության հետ միասին Մատուրովների կալվածքի կառավարիչ Բ. Ս. Փարվանյանցի դիմումը, նահանգի կոմիսարիատը հայտնում է, որ իր տրամադրության տակ գտնվող զինվորական ուժով անհնար է վերջնականապես կանխել այն ավե-

1 ՀՍՍՌ ՊԿԱ ֆ. 39 103, գ. 88 թ. 17—18։
2 ՀՍՍՌ ՊԿԱ ֆ 39 103, գ. 88, թ. 4։

ռումները, որ սկսվել են նահանգում, որպիսի վիճակում գտնվում է ոչ միայն Ծատուրովների կալվածքը, այլ ամբողջ Երևանյան նահանգը»[1]

Օգոստոսին դժգոհություններն արդեն այն աստիճանի են հասնում, որ գյուղացիները դիմում են զինված դիմադրության՝ զենքը ձեռներին պաշտպանում են իրենց ձեռք բերած նվաճումները։

Ն. Ախտայի կոմիսար Մնացականովը օգոստոսի 19-ին Երևանի նահանգային կոմիսարին ուղարկած հեռագրում նշում է՝ «Ամբողջ բնակչությունը զինված է և ցույց է տալիս դիմադրություն։ Խնդրում եմ ուղարկել ռազմական ուժ և անպայման կաղակների, հակառակ դեպքում անարխիան կտարածվի ամբողջ գավառում»[2]

Ծատուրովների կալվածքի շուրջը տեղի ունեցած համառ պայքարը շարունակվում է նաև հետագա ամիսներին և վերջանում է գյուղացիության կատարյալ հաղթանակով։ Գյուղացիները վերջնականապես դուրս են շպրտում կալվածքի կառավարիչին, բռնագրավում ոչ միայն հողային տարածությունները, այլև շարժական և անշարժ ողջ գույքը։ Դա Երևանի նահանգի աշխատավոր գյուղացիության խոշոր հաղթանակն էր տիրող կարգերի ու դաշնակների դեմ։ Դա վկայում էր դասակարգային այն սուր պայքարի մասին, որ մղվում էր Հայաստանում 1917 թ. փետրվարից—հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ։

Կարելի է հողային հարցի լուծման բնագավառում գյուղացիության կողմից մղված պայքարի բազմաթիվ նման փաստեր նշել նաև Հայաստանի այլ շրջաններից։

1917 թ. ագրարային շարժումը ընդգրկել էր ոչ միայն Երևանի նահանգը, այլև ամբողջ Հայաստանը։

Զծանրանալով նոր փաստերի վրա, բերված փաստերի շարադրությունից հետևյալ եզրակացություններին ենք հանգում.

1. Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը, որը գտնվում էր տնտեսական ամենածանր պայմաններում, զրկված էր հողից և անլուր շահագործման էր ենթարկվում կալվածատերերի, կուլակների, եկեղեցու կողմից, Փետրվարյան ռևոլուցիայի հաղթանակը դիմավորեց մեծ խանդավառությամբ, հույս ունենալով, որ նա կլուծի ագրարային հարցը հօգուտ իրեն։

2. Ռուսաստանի և Անդրկովկասի մյուս վայրերի պես, Հայաստանում ևս ռևոլուցիայի հաղթանակից հետո ստեղծվեցին գյուղացիական Սովետներ։ Սակայն ինչպես բանվորական և զինվորական Սովետներում, այնպես էլ գյուղացիական Սովետներում ռևոլուցիայից անմիջապես հետո մեծամասնություն կազմեցին մենշևիկները, էսեռները և դաշնակցականները։ Դաշնակցությունը Հայաստանի աշխատավոր գյուղացիությանը դասակարգային պայքարից շեղելու և կալվածատիրության դեմ բարձրացող ագրարային շարժումները կասեցնելու նպատակով իր դեմագոգիայով ոչ միայն քայքայիչ աշխատանք է տանում Սովետներում, այլև ստեղծում է այսպես կոչված «ազգային գյուղացիական միություններ», ձգտելով գյուղացիության դասակարգային պայքարը փոխադրել նացիոնալիզմի հողի վրա։

3. Պաշտպանելով ժամանակավոր կառավարության հակագյուղացիական քաղաքականությունը, Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաները

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, Ֆ. 39 103, գ. 88, Ք. 23—24։
[2] Նույն տեղում։

կարողացան բանվորների և գյուղացիների դեպուտատների Սովետի մայիսին գումարված համագումարում անցկացնել հողի մունիցիպալիզացիայի ծրագիրը, ագրարային հարցի վերջնական լուծումը թողնելով Սահմանադիր ժողովին։ Կազմելով մեծամասնություն և իրենց ձեռքը գցելով ղեկավարությունը, Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաները ագրարային հարցը չեն լուծում նաև հունիսին գումարված Անդրկովկասի գյուղացիական համագումարում։ Համագումարը ագրարային հարցի լուծումը ոչ միայն կրկին հետաձգում է մինչև Սահմանադիր ժողովը, այլ ընդունում է այնպիսի որոշումներ, որոնք դատապարտում են գյուղացիության կողմից հողերի բռնագրավումները։

4. Անդրկովկասի բոլշևիկների հետ միասին, Հայաստանի բոլշևիկները, ուղեցույց ունենալով Ապրիլյան կոնֆերենցիայի որոշումները և Լենինի ու Ստալինի ամենօրյա ցուցումները, Ստ. Շահումյանի և Ա. Միկոյանի գլխավորությամբ հետևողական կերպով մերկացնում են կոնտրռևոլուցիոն պարտիաների և առաջին հերթին դաշնակցության հակաժողովրդական, նացիոնալիստական քաղաքականությունը, գյուղական չքավորությանն ու բատրակությանը համախմբելով իրենց շուրջը, պայքարի են հանում նրանց՝ բռնագրավելու կալվածատիրական, կուլակային հողերը, իրականացնելու հողի ազգայնացման բոլշևիկյան ծրագիրը, առանց սպասելու Սահմանադիր ժողովին։ Կազմակերպելով գյուղացիությանը հողերի բռնագրավման համար, Հայաստանի բոլշևիկները պայքարում են իրականացնելու լենինյան-ստալինյան դիրեկտիվները՝ բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից Սոցիալիստական ռևոլուցիային անցնելու մասին։

Հայաստանի բոլշևիկների համար ուղեցույց հանդիսացավ այն ճշմարտությունը, որ առանց գյուղացիության մեծամասնությունն իրենց կողմը գրավելու, իրենց հետևից տանելու, ամրապնդելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը, անհնար է ռևոլուցիայի հետագա խորացումը, ժամանակավոր կառավարության տապալումը և Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում։

5. Չնայած ժամանակավոր կառավարության բազմաթիվ որոշումներին, Անդր. Հատուկ կոմ.-ի և տեղական իշխանությունների կողմից կիրառվող բռնություններին, չնայած դաշնակցության կողմից ծավալված նացիոնալիստական պրոպագանդային ու նրա կողմից կիրառվող պայքարի ստոր միջոցներին, փետրվարից—հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, ամբողջ Հայաստանում լայն ծավալ են ստանում ագրարային շարժումները, կալվածատիրական, վանքապատկան, պետական և այլ հողերի բռնագրավումները։ Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը, առաջին հերթին չքավորությունն ու բատրակությունը, հատկապես հուվիսյան դեպքերից հետո, մասսայաբար սկսում է հեռանալ դաշնակցականներից ու մանր-բուրժուական պարտիաներից և ավելի սերտորեն համախմբվել բոլշևիկների պարտիայի գրոշի ներքո։ Հոկտեմբերյան ռևոլուցիայի նախօրյակին հայկական գյուղը ալեկոծվում էր ագրարային-ռևոլուցիոն շարժումների ծովի մեջ։ Գյուղացիության գիտակից մասը պատրաստ էր ղենքը ձեռքին կռվելու, բուրժուական ժամանակավոր կառավարությունը տապալելու համար, պայքարելու հանուն հողի, դեմոկրատական ազատությունների և իմպերիալիստական պատերազմի անհապաղ ավարտման։

Р. Мовсисян

Аграрные движения в Армении в феврале—октябре 1917 г.

Резюме

Земельный голод, нищенское состояние крестьянства, жестоко эксплуатируемого помещиками и церковью, изо дня в день обостряли классовые противоречия в армянской деревне, вовлекая в борьбу вокруг аграрного вопроса все политические партии страны.

В первые же дни Февральской революции во многих деревнях Армении крестьяне создали Советы крестьянских депутатов. В апреле—июне были созданы Советы крестьянских депутатов почти во всех деревнях Армении; 27 мая был создан Совет крестьянских депутатов Эриванской губернии.

С самого же начала деятельности Советов крестьянских депутатов развернулась острая борьба между большевиками, с одной стороны, и меньшевиками и другими мелкобуржуазными партиями, с другой. Дашнакам, армянским меньшевикам и эсерам удалось завоевать большинство в Советах крестьянских депутатов. Эти партии всячески старались отвлечь крестьянство от классовой борьбы, не допускать конфискации помещичьих земель. Не удовлетворившись подрывной работой в Советах крестьянских депутатов, дашнаки приступили к созданию так называемых „Национальных крестьянских союзов".

Большевики Армении, возглавляемые С. Шаумяном и А. Микояном, вели острую борьбу против создаваемых дашнаками „Национальных крестьянских союзов", вскрывая их националистический характер, призывая крестьянство не вступать в эти союзы.

Большевики Армении, выполняя указания В. И. Ленина и И. В. Сталина, решительно выступили против политики откладывания решения аграрного вопроса до созыва Учредительного собрания и, вопреки пассивности и сопротивлению некоторой части Советов, в которых преобладали дашнаки и представители мелкобуржуазных партий, возглавили борьбу крестьянства за конфискацию помещичьих земель. Захват помещичьих земель крестьянами начался в первые же дни революции.

Большевики, возглавив крестьянское движение за конфискацию помещичьих земель, одновременно развернули борьбу против деревенской буржуазии—кулаков.

Летом, в особенности после июльских событий, борьба трудящегося крестьянства Армении против помещиков и кулаков принимает еще более острую форму; крестьяне с боем захватывают помещичьи и церковные земли. Большевики Армении, руководствуясь ленинскими указаниями, возглавляли борьбу трудящихся крестьян Армении за свержение власти Временного правительства и ОЗАКОМ-а.

Руководимое большевиками Армении трудящееся крестьянство активно выступало и против продолжения империалистической войны.

Таким образом, несмотря на реакционные мероприятия правительства и применяемые ОЗАКОМ-ом и местными властями репрессии, несмотря на националистическую пропаганду дашнаков, в период с февраля по октябрь 1917 г. под руководством большевиков в Армении развернулось широкое аграрное движение за конфискацию земель помещиков, церкви и государства. Накануне Великой Октябрьской социалистической революции сознательная часть крестьянства Армении была готова с оружием в руках бороться за коренное решение аграрного вопроса, за свержение временного буржуазного правительства.